



ЧАРЛЗ ДАРВИН  
(1809—1892)

...Дарвин положил конец воззрению на виды животных и растений, как на ничем не связанные, случайные, „богом созданные“ и неизменяемые, и впервые поставил биологию на вполне научную почву, установив изменимость видов и преемственность между ними...\*

*В. И. Ленин.*

Ռ. Բ. ԳԱՐՐԻՆԵԼՅԱՆ

ԳԱՐՎԻՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևմտահայ գրականություն մեջ շատ է զբաղվել գարվինիզմի և այդ ուսմունքի հետ առնչություն ունեցող հարցերի մասին: Գարվինի «Տեսակների ծագում»-ը աշխատություն լույս տեսնելու օրից (1859), չնայած այն բանին, որ գիտությունը վերջնականապես ընդունեց էվոլյուցիոն ուսմունքի գրույթները, բայց և այնպես բանկվեց պայքար գարվինիզմի դեմ, ավելի կատաղի հարձակումներ կցան գարվինիզմի դեմ, երբ լույս տեսավ Գարվինի երկրորդ խոշոր աշխատությունը՝ «Մարդու ծագումը և սեռական ընտրությունը» (1871): Հասարակական գեղն իր ձեռքը վերցրած բուրժուազիան արդեն չէր կարող նախկին գրույթներով մտանալ գարվինիզմին: Հայանի է, որ մարքսիզմի կրասիկները՝ Մարքսը և Էնգելսը օգնություն շարժվին ուսմունքը, շեշտեցին նրա մատերիալիստական, սոցիալիստիկ էությունը, միաժամանակ քննադատելով այն թերի կողմերը, որոնք առիթ էին տալիս բուրժուազիային իր շահերի տեսակետից իդեալիստորեն մեկնարանելու գարվինիզմը:

Տարրեր մտնեցումներ էին ցուցաբերվում գարվինիզմին: Ուսմունք լիովին ընդունում էին գարվինիզմը, ընդգծելով նրա սոցիալիստիկ բնույթը, խոշոր նշանակությունը մատերիալիստական աշխարհայացքի համար, բայց տեսակի կրոնա-իդեալիստական գաղափարների դեմ ուղղված պայքարում, ուրիշները գարվինիզմն ընդունում էին որոշ վերադասություններ, առանց կյանքի ծագման, մարդու ծագման պրոբլեմների, որոնց լուծման իրավունքը վերադասում էին կրոնին, երրորդները, լավ հասկանալով գարվինիզմի հակակրոնական էությունը, բացարձակապես դեմ էին գարվինիզմին ամբողջությամբ: Գարվինիզմի շուրջը կատաղի պայքար մղվեց ամեն տեղ, որ մուսք գործեց Գարվինի ուսմունքի թարմ հոսանքը:

Այդ պայքարի արտացոլումը մենք տեսնում ենք նաև արևմտահայ միջավայրում: Արևմտահայ գրականությունը վաղուց լուրջ հետաքրքրություն էր ցուցաբերել գրական գիտությունների, մասնավորապես ընտրատություն և նրա ճյուղը հանդիսացող բիոլոգիայի նկատմամբ: Բիոլոգիայի սկզբունքային, աշխարհայացքային պրոբլեմները պայքարի առարկա էին դեռ XIX դարի կեսերին և, հատկապես, երկրորդ կեսին:

Գարվինիզմի շուրջն ընթացող պայքարն իր արտացոլումը գտավ նաև արևմտահայ գիտական գրականություն մեջ: Գարվինի աշխատությունների մասին, տարրեր պրոբլեմների կապակցությամբ, սկսեցին գրել հենց այդ աշխատությունների լույս տեսնելու օրից: Կային կողմնակիցներ, կային հակասակորդներ, կային և միջին ճանապարհ ընտրող հոսանքներ, որոնք չժխտելով գարվինիզմի նշանակությունը, աշխատում

էին հաճախ Գարրիկյանի մտքերի սխալ մեկնարանությամբ հաշտության կամ  
մտք զցել գարրիկյանի և կրոնի միջև:

Արևմտահայ միջավայրում ամենաուժեղ հոսանքը վերջինն էր. այս  
հոսանքն ունեւ երկու ուղղության. մեկը համոզված պաշտպանում էր գար-  
րիկյանի, միայն մարդու ծագումը, կյանքի ծագումը վերագրում էր գեր-  
բնական ուժին. այս հոսանքի կողմնակիցներ կային նաև կրոնավորների  
մեջ, օրինակ, Մխիթարյան վանական րնադեաների մեջ. սմանք էլ շրջա-  
պատի խավարամիտ միջնորդից ազդված, գիտակցարար քողարկում էին  
իրենց հայացքները կյանքի ծագման, մարդու ծագման վերաբերյալ, սկա-  
մա իդեալիստորեն էին մեկնարանում այդ հարցը, նույնիսկ օգտագործե-  
լով այն հանգամանքը, որ Գարրիկյան էլ ոչինչ չէր ասել կյանքի ծագման  
մասին, Գարրիկյան էլ վերագրեցին իրենց իդեալիստական մտակցումը:

Մենք մտադիր չենք բոլոր հոսանքների վրա էլ կանգ առնել. այս-  
տեղ կխոսենք հատկապես երկու արևմտահայ գործիչների մասին, որոնք  
աչքի էին ընկնում իրենց րնադիտական էրուդիցիայով և ճիշտ էին հաս-  
կանում գարրիկյանի մատերիալիստական էությունը: Մեկը րնադեա-րմիչի  
Մալաքյանն է, մյուսը՝ Էլեմը: Մալաքյանը պայքարում էր հանուն գար-  
րիկյանի՝ սրպես մատերիալիստական, հակակրոնական ուսմունքի, իսկ  
Էլեմը պայքար էր մղում գարրիկյանի սխալ մեկնարանողների, գարրի-  
կյանի քուրճուկագիտյի շահերին ծառայեցնողների, այսպես կոչված, սո-  
ցիալ-գարրիկյանների դեմ:

Բժ. Մալաքյանը «Բյուրակն» հանդեսի աշխատակիցն էր: Մի շարք  
համարներում 1898—1899 թվականներին Մալաքյանը տպագրել էր «Կյանքը  
փիլիսոփայական կենսարանություն» ակնարկը: Տալով կյանքի գարգաց-  
ման վերաբերյալ պատմականորեն փոփոխվող հայացքների վերլուծումը  
մատերիալիստական դիրքերից, Մալաքյանն ասանձնապես սրում է կրոնի  
և գիտության, իդեալիզմի և մատերիալիզմի անհամատեղելիության հարցը  
Ահա թե ինչպես է րնութագրում նա միջնադարը, «Անվանի և կեղծ փիլի-  
սոփայությամբ, իր արտասոց հավատներով, սր արտակարգ նախասպաշա-  
րու մներ կախրելն: Գիտողությունները իբր կեղրան ունեին վանքերը և իբր  
կառավարող՝ կղերնէրը, որոնք փոխանակ երես յթներու, տեսիլնելու պատ-  
ճասը, ինչն փնտսելու, ամեն ինչ կաստվածացնելն և այսպես թե քարո-  
յապես և թե փիլիկապես կկուրացնելն մարդկային միտքը, առաջնոր-  
ղելով զանոնք հրաշքի, ցնորքներու աշխարհներու մեջ» («Բյուրակն»,  
1899, էջ 606): 1911 թվականին յայս է ասանում Մալաքյանի  
«Արարիչը գիտության ասջե» աշխատությանը: Տարօրինակ վերնադիրը  
հասկանալի է դառնում, երբ ծանոթանում ենք ամբողջ բովանդակությա-  
նը: Նրա նպատակն էր՝ վերջ տալ այն մտայնությանը, թե սրեկ կերպ  
րնադիտությունը, նրա սկզբունքային, աշխարհայացքային պրոբլեմները  
կարելի է համատեղել կրոնի հետ: Նա խոսում է և այնպիսի հարցերի մա-  
սին, որոնք կասկ առնեն կյանքի էվոլյուցիայի, փոփոխականության հետ,  
այնպիսի բխողիական պրոբլեմների մասին, որոնք նախապայայներ են  
ծառայում գարրիկյանի համար: Ահա այդ հարցերը, կար մամանակ, երբ  
երկրի վրա մարդ չէր ապրում, հավիտենական փոփոխության արեղերական  
օրենքը, կյանքը, կենդանիները և քույսերը, կենդանիների աշխարհագրա-  
կան րաշխումը, պայլեոնտոլոգիայի նշանակությունը, կյանքի ծագման

պրորկումը, ինչ բան է տեսակը, կյանք թե՛ մահ, գործարանավոր և ան-  
գործարանավոր մարմինների գանազանութիւնը, նյութապաշտ վարդա-  
պետութիւնը, բարեշրջութիւն (էվոլյուցիայի) ռաճկիրանները — բնաշրջ-  
ման հիմնական օրենքները, գարվիճականութիւնը: Այս հարցերից արդեն  
պարզ երևում է, որ հեղինակի նպատակն էր՝ շեշտել կյանքի միասնու-  
թիւնը, նրա ծագումը անկենդան աշխարհից և կապը վերջինիս հետ, նրա  
էվոլյուցիան և այդ էվոլյուցիայի բնական ազդակները: Այս բոլոր հարցե-  
րը սերտորեն կապված են իրար հետ, անհիմն են դուրս բերում իդեալիս-  
տական աշխարհայեցողութիւնը, արտաքսում բնութիւնից գերբնականը:

Ներածականում հեղինակը նշում է իր հիմնական նպատակը՝ գրսե-  
րել գիտութիւնը բարերար ազդեցութիւնը «մարդկային ընկերութիւն  
վրայ, անհիմն դուրս բերել Վերոնական ավելորդապաշտութիւնները,  
գրախափ և դժոխքի գառանցանքները, պաշտանոցականներու հետադիմա-  
կան պայքարը»: Ինկվիզիցիայի ժամանակաշրջանից վերցրած մի քանի  
ցայտուն օրինակներով նա նշում է կրօնի, եկեղեցու հալածանքները նշա-  
նավոր գիտնականների նկատմամբ, խարույկի վրա նրանց այրելու  
գեպքերը:

Դարվիճիգիմի հետ կապված հարցերն այսպես է քննարկում. կյանքը,  
օրգանիզմները չեն ստեղծվել իրարից անկախ և կարճ ժամանակամիջո-  
ցում. կյանքի ծագման օրից մինչև մարդու առաջ գալն ահագին ժամա-  
նակ է անցել, նրա տակով՝ «այնքան միլիոն և միլիոն տարիներ հաջոր-  
դած են որ մարդկային ամբողջ պատմութիւնը ժամանակամիջոցը կանխա-  
նա այս հսկա շրջանին առջև» (էջ 4):

Ոչ միայն օրգանիզմներն են իրար հետ կապված, այլև մարդը կենդա-  
նական ծագում ունի, երկարատև գարգացման, էվոլյուցիայի արդյունք են  
նրա բոլոր օրգանները: Այս միտքը նա արտահայտում է կենդանի և պատ-  
կերավոր ոճով: Մալաքյանը, մի քիչ շեղվելով շարադրութիւնի գիտական  
ոճից, խոսեցնում է մարդու կենդանական նախահայրերին, այսպես.

«... Այն աչքերը, որսնցով կղիտեք բնութիւնը հիասքանչ և զգլխիչ  
տեսարանները, ահա անոնց պարզը, անոնց առաջին փորձերը մեզ մոտ և  
եթե մենք չունենայինք այս պարզ աչքերը, դուք այսօր կույր պիտի  
ըլլայիք: Ձեր այդքան փափուկ, այդքան ճարպիկ ձեռքերը առաջ եկած են  
այս մեր կոշտ թաթերու կատարելագործումն...» (էջ 5):

«Ձեր բերանը, լեզուն, տկոտները նուրբ և սիրուն են, բայց անոնք  
մեր երախներու, մեր կտուցներու, մեր ժանիքներու բարեշրջումն առաջ  
եկած են...» (էջ 5):

«...Նմի ձեր ուղեղը որուն մեջ կը կենդրոնացնէք ձեր հոգին, զգացումը  
և բանականութիւնը, մեր ողնածուծն է՝ որ աճած, ուսնացած, կատարե-  
լագործված է, և առանց մեր ողնածուծին, դուք ուղեղե զրկված պիտի  
ըլլայիք» (էջ 5):

Եվ այսպես, մի շարք այլ օրգանների նկատմամբ Մալաքյանը ըն-  
թերցողին համոզում է, որ մարդը ոչ թե անկախ ստեղծագործութիւն ար-  
դյունք է, այլ գարգացել է կենդանիներից. նա վճռականորեն ասում է.  
«Մարդը հրաշքի գործ չէ, այլ միայն և միայն բնութիւնը, մայր բնու-  
թիւնը հարազատ գալիս է» (էջ 6):

Պալեոնտոլոգիան այն բիոլոգիական գիտութեանն է, որի ավյալներն ամենացայտուն կերպով ասպացուցում են կյանքի աստիճանական և տեսական դարգացումը պարզից գեղի բարդ ձևերը: Մալաքոլոգիանը նշում է, որ պալեոնտոլոգիայի ավյալները հաստատում են կենդանիների էվոլյուցիան և մարդու կենդանական ծագումը: «Ոչ ոք անգիտանալու է, — գրում է նա, — թե մարդուս և բոլոր ողնաշարավոր կենդանիներու մարմինները միևնույն անգամադննական կազմվածքն ունին: Ոչ ոք անգիտանալու է, թե գետ մենք ունենք atrophie գործարաններ, բոլորովին անպետք և անգործածելի՝ որոնք մեր նախահայր կենդանիներու մոտ մինչև այժմ գտնվածներուն մնացորդները կը ներկայացնեն: Ոչ ոք անգիտանալու է, թե մարդը, ծնելի ասաջ, հզության ասաջին ամիսներուն, մեր արդանդին մեջ հաջորդաբար կ'ըլլա կակղամորթ, ձուկ, սողուն, չորքոտանի, — բնութեանը այսպես համառոտեր է պղտիկ ձևի մը տակ հին դարերու իր հրաշալի գործունեութեանը...» (էջ 7—8):

Մալաքոլոգիան պարզ ակնարկում է մարդու կենդանական ծագման սողմնարանական և անասամիական ասպացույցները, վերջինից ասանձնապես շեշտում է մնացորդ, այսպես կոչված, սուղիմենասար օրգանները, տարաֆիտայի, հետզարգացման ենթարկված օրգանները, օրինակ՝ մարդու մոտ կույր աղիքի օրգանման հավելվածը, որ ժառանգված է բուսակեր նախահայրերից:

Բայց Մալաքոլոգիան բնագետին ոչ հատուկ մի թերութեանն ունի այս հարցի նկատմամբ: Նա չի նշում կոնկրետ օրինակներ, մինչդեռ ոչ միայն այդ, այլև համապատասխան նկարները, որ բոլորովին բացակայում են, ավելի ցայտուն կդարձնեն նրա նկարագրութեանը:

Գարրիեւյանը բնական օրենքների համաձայն լուսարանեց կենդանիների և բույսերի հարմարանքները միջավայրի պայմաններին: Օրգանիզմների աշխարհագրական բաշխումը, տարածումը էվոլյուցիան սկզբունքի նոր լույսի տակ բնական օրենաչափութեաններով լուսարանվեցին: Մալաքոլոգիան կանգ է առնում և այդ հարցերի վրա, նշում է և այն օրինակները, երբ որոշ կենդանիների տեղաշարժման ասպակը մարդն է հանդիսացել: Մալաքոլոգիան փարատում էր տարածված այն միտքը, թե ամեն մի օրգանիզմի ծագման հարցը կասկած է այն վայրի հետ, որտեղ նա այժմ բնակվում է: Այս տեսակետից դուրս կրա, որ միևնույն տեսակի ներկայացուցիչներն իրարից կտրված են, եթե հետագոր մայր պամեքներում, տարբեր աշխարհագրական վայրերում են ապրում, այս բոլոր տեղերում էլ իրարից անկախ են ասաջացել և ոչ թե մեկ մայր օջախում, որտեղից այս կամ այն կերպ տարբեր ժամանակաշրջաններում տեղափոխվել են: Մալաքոլոգիան բերում է այսպիսի օրինակ, մինչև մարդու գալը նոր Զելանդիան գուրկ էր կաթնասուններից. «Եթե, — ասում է Մալաքոլոգիան, — այս կզգիները երկար ժամանակ սանամորձներն զրկված էին, ոչ թե անկարող էին գանձնք սնուցանելու, այլ սրովհետև այս սանամոր կենդանիները ճամբորդութեան միջոց չունենալով, չէին կրցած հան հասնել» (էջ 26):

Մարդու շնորհիվ այդ կզգիների վրա լավ բնակացած են եղել կովը, ճագարը, ոչխարը, այծը և այլ: Բնչպես տեսնում ենք, Մալաքոլոգիան աշխատում է գարրիեւյանի տեսանկյունով մտահնայ հարցին:

Պալեոնտոլոգիայի կապակցութեամբ Մալաքյանը խօսում է Կյուվիէի կատաստրոֆների թեորիայի մասին: Դա մի թեորիա է, որով իզեալիստ բնագեաները ցանկանում էին պատճառարանել, իզեալիստորեն մեկնարանել կրոնական գրույթներին հակասող՝ օրգանիզմների փոփոխութեան փաստը, բրածոների՝ որպէս պատմական զարգացման վավերագրերի ռեալ գոյութեանը: Կյուվիէի գրույթն էր՝ երկիրն ապրել է մի քանի հեղաշրջումամեն մի հեղաշրջումից հետո առաջացել է նոր Փաուսա, նոր Փլորա, ավելի բարդ, ավելի զարգացած ձևեր, որոնք, սակայն, կապ չունեին նախորդ մասնականաշրջանի ձևերի հետ: Լյանը 1930 թ. «Երկրաբանութեան հիմունքները» իր կլասիկ աշխատութեամբ հերքեց կատաստրոֆների թեորիան երկրագնդի զարգացման նկատմամբ, հաստատեց էվոլյուցիոն մոտեցումը երկրաբանութեան մեջ, սակայն միայն 1859 թվականին հաստատուեց օրգանիզմների ազգակցական էվոլյուցիայի փաստը: Բայց Կյուվիէի կատաստրոֆների թեորիան դեռ երկար մասնակ օգտագործվում էր իզեալիստների կողմից օրգանական աշխարհի փոփոխութեանների պատճառները կրոնական մեկնարանութեանների հետ հաշտեցնելու համար: Կյուվիէի թեորիան հարմար էր դրա համար: Մալաքյանը նշում է, որ այդ թեորիան կորցրել է իր նշանակութեանը, քանի որ նա հանգում էր գերբնականին. «Քյուվիէի թեորիան ինկած էր, — ասում է Մալաքյանը, — որովհետև ուր որ հրաշք կմանէ, հոն գիտութեանը գոյութեան ունենալէ կը դադարի» (էջ 30):

Մալաքյանը կյանքի ծագման հարցում նույնպէս կանգնած է մատերիալիստական գրույթների վրա: Այս հարցի մասին Դարձիւնը չի խոսել: Դարձիւնի մի անհաջող արտահայտութեանն առաջին օրգանիզմների առաջ գալու մասին առիթ էր տվել կարծելու, թե այս հարցում Դարձիւնը դիմում է կրոնին: Այդ սխալ է, իհարկեւ ճիշտ է, Մալաքյանը, հենվելով Պաստյորի աշխատութեանների վրա, նշում է, որ իսկապէս բոլոր ավյալները Պաստյորից առաջ և նրա մասնակ այն մասին, թե բնութեան մեջ օրգանիզմները ինքնածննդով են առաջացել անկենդան աշխարհից, հերքվեց: Մալաքյանն այս խնդրում չհետեւեց նաև տատանվող որոշ հայ բնագեաների, որոնք հրամարվեցին կամ խուսափեցին վերջնական կարծիք հայանելու կյանքի ծագման մասին: Մալաքյանը, որպէս մատերիալիստ բնագեա, չեկավ այն եզրակացութեան, թե Պաստյորի փորձերը հրապարակից իսպառ վերացրին անկենդան աշխարհի նյութերից կյանքի առաջ գալու պրոբլեմը: Մալաքյանն այդ տոթիվ գրում է, «1860 թվականին ամեմա՝ Փաստեոտ հիմնապէս տապալեց ինքնածին սերման գաղափարը և հաստատեց թե, զոնե այժմ որեւէ բույս կամ կենդանի արդի պայմաններու և տակ առանց սերմի չի կրնար հատաջ գալ» (էջ 32):

Մալաքյանն այս հարցում չհետեւեց Տագափարյանին, որը, ըստ երևույթի նորոջ պայմաններից ազդված, հրամարվեց այդ հարցին պատասխանել այնպէս, ինչպէս պահանջվում էր մատերիալիստ-գարվիճիստից: Մալաքյանի տեսլով, կյանքի առաջացումն անկենդան նյութերից «զոնե այժմ... արդի պայմաններու տակ» աեղի շունի, իսկ եթե անցյալում կատարվել է այդ պրոցեսը, նա չի մխում:

Մալաքյանի աշխատութեան վերջին գլուխները շոշափում են հաստատուեց էվոլյուցիոն ուսման արձագանքները, գարվիճիվի հարցերը: Նա որոջ պատմա-

կան ակնարկ է տալիս՝ սկսած անտիկ աշխարհից, ընթերցողի ուշադրու-  
թյունն առանձնապես գրավում է անտիկ մատերիալիստ բնագետ-բանա-  
ստեղծ Լուկրեցիուս Կարի վրա, որն իր «Իրերի բնությունը» (De rerum  
naturae) կլասիկ պոեմով, որ իրենից ներկայացնում է մի գիտական էն-  
ցիկլոպեդիա, գրավեց համաշխարհային գիտության ուշադրությունը: Լու-  
կրեցիուս Կարն իր պոեմում երկար կանգ է առնում անտիկ աշխարհի  
նշանավոր գիտնական էմպեդոկլի հայացքների վրա՝ կյանքի ծագման մա-  
սին, արդանիզմների բազմաձևության ծագման մասին: Էմպեդոկլի ֆան-  
տաստիկ բացատրությունների մեջ կային միայն սազմեր գոյության  
կովի, բնական ընտրության, հարմարվողականության գաղափարների մա-  
սին, բայց, իհարկե, ըստ բովանդակության այդ գաղափարները ոչ մի  
նմանություն չունեին դարվինյան մեկնարանության հետ:

Ձի կարելի ասել, որ Դարվինը զարգացրեց էմպեդոկլի կամ Լուկրեցիուս  
Կարի գաղափարները: Այս առթիվ Մալաքյանը գրում է. «Անշուշտ, Լուք-  
րեատիոսի գաղափարները սխալ են, բայց լատին բանաստեղծին հիմնական  
գաղափարը ճիշտ է, քանի որ բնության կույր ուժերը ջնջած են անկատար  
էակներու թերի կազմը, ճղճիմ էակները և թողած են միայն անոնք,  
որոնք կարող են գոյության առօրյա պայքարը մղել, գոյության կովի՝ որ  
բնաշրջման վարդապետության հիմնաքարը պիտի կազմե ժամանակակից  
գիտուններուն քով» (էջ 54):

Մալաքյանը համառոտակի թվարկում է մի շարք բնագետների, ինչ-  
պես Դը Մայե, Տրեիրանուս, Շլայդեն, Օկեն, Լամարկ և ուրիշներ, որոնք  
այս կամ այն չափով նպաստել էին էվոլյուցիոն գաղափարի զարգացմանը:  
Լամարկի մասին գրում է. «Իր «Կենսաբանական փիլիսոփայություն»  
(ճիշտը պիտի լինի՝ «Կենդանաբանության փիլիսոփայություն» — Ռ. Գ.)  
անուն աշխատության մեջ պարզեց գիտականորեն այն գաղափարը թե՛  
կենդանական և բուսական տեսակները առանձնապես չեն ստեղծված և մեկը  
մյուսն սերած է կարգ մը փոփոխությանց շնորհիվ, որոնք դանդաղորեն  
տեղի ունեցած են մասնավոր պայմաններու ազդեցությամբ» (էջ 55):

Մալաքյանն իր գրքի՝ «Բնաշրջման հիմնական օրենքները» և «Տար-  
վինականություն» գլուխներում խոսում է հետևյալ հարցերի մասին.  
«1. Սերման օրենք, 2. Աճման հարնչությանց (correlation) օրենքը, 3. Փա-  
ռանդականության օրենքը, 4. Տեսակներու երկրաչափական բազմապատկու-  
թյան և սնունդներու թվաբանական բազմապատկության օրենքը», ապա  
էվոլյուցիայի հիմնական ազդակների՝ գոյության կովի, բնական ընտրու-  
թյան, նաև արհեստական ընտրության մասին:

Մալաքյանի ընդհանուր եզրակացությունն այս է՝ արարիչը գիտու-  
թյան առջև դործ չունի: «Կյանքին և մարդուն ծագումը, — ասում է նա, —  
աստուծո մը վերագրողներուն համար, յուրաքանչյուր տեսակ նախապես և  
անհատապես ծնած են և մինչև այսօր միևնույն ձևը պահած»:

«...Ընդունիլ և ըսել թե աստված մը բոլոր կենդանիները, բույսերը  
և մարդը միակաուր ստեղծեց, ասիկա պարզապես մեր տգիտությունը  
խոստովանիլ է» (էջ 54):

Ամփոփելով ասածներս, պետք է նշենք, որ ըմ. Մալաքյանը արևմտա-  
հայ մտավորականների մեջ XIX դարավերջին և XX դարասկզբի այն  
սակավաթիվ գործիչներից է, որ բիոլոգիական պրոբլեմներին մոտեցավ

մատերիալիստական գիրքերից, պայքար մղեց գարվինիզմի իդեալիստ մեկնարանողներին դեմ: Նա պարզորոշ գրականորեն իր գիրքը էվոլյուցիոն ուսմունքի, կյանքի ծագման նկատմամբ, շանցավ և մարդու ծագման հարցի կողքով, այլ կտրուկ կերպով դրեց և այս պրոբլեմի մատերիալիստական լուծումը:

\* \* \*

Ինչպես սկզբում ասացինք, գարվինիզմն օգտագործվեց իդեալիստների կողմից ոչ միայն կրոնի հետ հաշտեցնելու ուղղությամբ, այլև քաղաքական նպատակներով: Գարվինիզմն օգտագործվեց կապիտալիստական հասարակարգի ներհակությունները պատճառարանելու, բխուղիական օրենքներով արդարացնելու համար: Չքափորությունը, գործազրկությունը, մարդկային ուժի անխնա շահագործումը, իմպերիալիստական գաղութային քաղաքականությունը, պատերազմները — այս բոլորը բուրժուական բնագետ և ոչ բնագետ գարվինիստները փորձեցին մեկնաբանել, Գարվինի ուսմունքից ելնելով: Ծնվեց, այսպես կոչված, սոցիալ-գարվինիզմը, որի ներկայացուցիչները մարդկային հասարակության և օրգանական աշխարհի պարզացման օրինաչափությունները նույնացրին, սոցիալական երևույթներն սկսեցին մեկնաբանել բխուղիորեն, գարվինիզմից ելնելով:

Մարքսիզմի կլասիկները՝ Մարքսը, Էնգելսը ուժեղ հարված հասցրին սոցիալ-գարվինիստներին, նրանք վեր հանեցին սոցիալ-գարվինիստական դրույթների դասակարգային աստատը:

Հայկական միջավայրն էլ արձագանքեց այդ պայքարին, արևմտահայ մամուլում՝ «Ներկունք»-ում հանդես եկավ Էլեմը: Մարքսի, Էնգելսի աշխատություններին տեղյակ լինելով, Էլեմը մատերիալիստական տեսանկյունով մտակցավ գարվինիզմին, հետևելով մարքսիզմի կլասիկների դրույթներին, պայքար մղեց սոցիալ-գարվինիզմի դեմ հայ իրականության մեջ:

Ուշագրավ է Էլեմի «Տարվինիզմը որպես հասարակական տեսություն» աշխատությունը («Ներկունք», 1912, №№ 1 — 8): Էլեմը ուսումնասիրել էր ոչ միայն Գարվինին, այլև նրա հետևորդներին՝ Հեկկելին, Հուբսլեյին, Գոգելին, Գելլամին ու Գորգամիտին, նաև սոցիոլոգներ Լորիային, Ֆերրին, ապա և անարխիզմի ականավոր տեսարան կրապոտիկինին, որը հայտնի էր իր «Փոխօգնությունը որպես էվոլյուցիայի ազդակ» նշանավոր աշխատությամբ:

Էլեմը նախ նշում է, որ գիտության այլ բնագավառներն էլ «տարվինիզմի շնորհիվ բնաշրջումի գաղափարին հաղթանակով իրենց հիմքն իսկ հեղաշրջվեցան ու անտվ կերպարանափոխվեցան» (№ 1, էջ 19—20):

Թեև տարրեր գիտություններ իրար վրա ազդում են, բայց մեկ գիտության սկզբունքներն առելով՝ «չի կարելի տառացիորեն կիրառել ուրիշների մեջ», ասանց նկատի առնելու յուրաքանչյուրի ուսումնասիրության օրյակար, յուրանատուկ դրույթները, օրինաչափությունները: Այդպես գատելով, նա նշում է, թե ինչպես ծագեց սոցիալ-գարվինիզմը:

Նա ենթադրություն, որ Էլեմը XIX դարի սկզբի հայ մարքսիստ գործիչներից էր՝ Գարեգին Կոզիկյան: Նա ժնկում որոշ մամուլակ եղել է «Месրա» թերթի գրաշարներից մեկը, ապա գալով Կովկաս, աշխատակցել է հայ մամուլին «Եսալեմ» կեղծանվան տակ:

«Ավասիկ, — գրում է նա, — այս ընդհանրացումներն մեկն է տարվինիզմի հասարակագիտության մեջ կիրառումը, որով կջանան բացատրելու հասարակական ամեն երևույթ և շարժում միմիայն տարվինիզմի օրենքներով և սկզբունքներով» (էջ 20):

Նախքան բուն սոցիալ-դարվինիզմի քննադատականին անցնելը, էլեմը ընդհանուր գծերով ծանոթացնում է Գարվինի ուսմունքի սկզբունքներին, ապա ատանձնապես կանգ է առնում այն հարցի վրա, որն օգտագործեցին սոցիալ-դարվինիստները՝ գոյության կոլի, նրա պատճառների և արտահայտությունների վրա: Հատուկ գլուխներում՝ «Կենսաբանություն և հասարակագիտություն», «Ընկերային տարվինիզմ» արդեն խոսում է սոցիալական և բիոլոգիական օրինաչափությունները նույնացնելու՝ սոցիալ-դարվինիստների գրույթի մասին, քննադատում է այդ մտակցումը:

Էլեմն առարկում է այն բանի դեմ, որ բիոլոգիական գոյության կոլի իր հետևանքներով նույնացնում են դասակարգային պայքարի հետ, նա դեմ է մարդկային հասարակության օրենքները օրգանական աշխարհի օրենքների հետ նույնացնելու տեսակետին: Էլեմը նշում է, որ մարդկային հասարակությունը միատարր չէ, հակադիր շահեր ունեցող դասակարգերից է կազմված, դեմ է և այն բանին, որ Մալթուսի ֆորմուլայից ելնելով պիտի բացատրել աղքատությունը, այսինքն այդ վերագրել մարդկության գերաճման և սննդի անբավարար քանակին, ինչպես այդ ֆորմուլան Գարվինը կիրառում էր կենդանական և բուսական աշխարհների նկատմամբ: Անհիմն է համարում մալթուսականների այդ գրույթը, քանի որ «Հարստությունը, — ասում է էլեմը, — տարածված չէ հասարակության մեջ, այնպես որ աղքատության պատճառը ոչ թե այն է, որ ազգաբնակչությունը չափազանց կաճի և տարուտի միջոցներ կնվազին, այլ պարզապես անոր համար, որ հարստությունը ինկած է որոշ գասի մը ձեռքը, գիզված ու կենտրոնացած հոն, ատանց որևէ օգտակարության, գրկելով միևնույն ատեն ամբողջ հասարակություն մը ապրելու անհրաժեշտ միջոցներն» (էջ 64):

Եթե գերաճումը լիներ աղքատության պատճառ, իսկ ազգաբնակչության պակասելը նպաստեր հարստությանը, ապա այդ տեսակետն ընդունելով, ասում է էլեմը, ամեն տեղ, որտեղ բնակչությունը պակասի, պետք է որ հարստությունը շատանա, այսպես, օրինակ՝ «Միսկերիայի մեջ շատ մը կիսավայրենի ցեղեր գրեթե ոչնչանալու վրա են, և պետք էր, որ ըստ Մալթուսի, մեռնողներն ևս քոպջ մնացածները, քիչցած բլլալով՝ հարբստանային, մինչդեռ հակառակն է, որ կտեսնվի» (էջ 65):

Մի ուրիշ օրինակ. «Բրլանտայի մեջ 18-րդ դարուն սոսկալի արտագաղթ մը սկսավ դեպի Ամերիկա...»:

«...Բրլանտայի մեջ ազգաբնակչության թիվը պակասելով, պետք է որ հարստանային, մինչդեռ, ընդհակառակն, կազբատանային» (էջ 65):

Ուրեմն պարզ է, որ չի կարելի գեկավարվել Մալթուսի ֆորմուլայով, ինչպես այդ անում են սոցիալ-դարվինիստները: Սոցիալական երևույթները չի կարելի մեկնարանել, գոյության կոլի սկզբունքից ելնելով: Մննդի պակասությունը մարդկային հասարակության մեջ արհեստականորեն ստեղծված բան է: Մարդկանց համար սնունդը չի պակասի, եթե բնության բարիքները մարդու կողմից օգտագործվեն լրիվ և բաշխվեն արդարացի:

Էլեմբ նշում է. «Բնությունն այնքան հարուստ է և ճոխ, որ ավելին ունի, քան ինչ որ գոյություն ունեցող բերանները կը պահանջեն իրմե, դարձյալ պայմանով, որ արհեստական արդելքներ, մարդկային շարաշահումներ գոյություն չունենան» (էջ 65):

Քննադատելով Մալթուսի դրույթները, էլեմբ միաժամանակ նշում է, որ նույնիսկ բնակչության մեջ չի կարելի ամենուրեք տեսնել գոյության կոխի: Բնության մեջ կա և համագործակցություն, էլեմբի արտահայտութեամբ՝ «խրեթոզություն», որ «նույնքան և թերևս ավելի մեծ ազդակ» է հանդիսանում առաջադիմության համար:

Էլեմբի դատողությունն օրգանիզմների համագործակցության, փոխադարձ օգնության մասին չի հակասում գարվինիզմին: Դարվինն բնդունում է այդ ազդակն ևս, ինքն էլ օրինակներ է բերում: Կենդանական աշխարհում նկատվում են, այսպես կոչված, սիմբիոզ (կենակցություն), երբ տարրեր կենդանիներն օգնում են իրար, կա և հասարակական կյանք՝ ժամանակավոր, մշտական, այս փաստերը, իհարկե, չեն վրիպել Դարվինի ուշադրությունից: Սակայն սոցիալ-դարվինիստները ծածկում են այդ երևույթը, առաջ քաշելով միայն կատաղի գոյության կոխը, որպես միակ ազդակ էվոլյուցիայի պրոցեսում: Այստեղից էլ անում էին այն եզրակացությունը, որ մարդկային հասարակության մեջ էլ միայն և միայն գոյության կոխը է նպաստում մարդկության զարգացմանը:

Էլեմբ բնդունում է, որ մարդկանց մեջ էլ կա գոյության կոխի, բայց նա տարրեր էտապներում տարրեր կերպ է արտահայտվում. դա այնպիսի գոյության պայքար չէ, ինչպիսին իշխում է կենդանական աշխարհում: Մարդկային գոյության կոխը, ասում է էլեմբ, «չունի այն տիրապետություն մեծ շրջանակը, ինչ որ կա կենդանական հասարակություններում մեջ...»:

Էլեմբ հետևյալ կերպ է բնութագրում կենդանական գոյության կոխը, ապա և մարդու հարաբերությունը բնության նկատմամբ:

«...Գոյության կոխը, — գրում է էլեմբ, — կենդանիների մեջ տեղի կունենա այն տեսակ պայմաններու, ուժերու ազդեցության տակ, որոնց մեջ կենդանին մասնակցության ոչ մեկ բաժին ունի և չէ կրցած այդ բնական պայմանները փոխել, հարմարեցնել իրեն և բնությունն է, որ տարրերային սեռով առաջ կը մղե գոյության կոխի գործողությունը, փոխելով ու հարմարեցնելով կենդանին զինքը շրջապատող պայմաններուն, անդին մարդը, շնորհիվ իր կտրած անցած երկար դարերու միջոցով հավաքած փորձառություն ու մտավոր կարողության՝ կրցած է շափ ու սահման դնել բնության անսանձ գործունեության և կերտել ու ձևափոխել միջավայրը ու պայմանները իր պետքին ու պահանջներուն համեմատ» (էջ 86):

Այսպիսով, պարզ շեշտվում է մարդկային և կենդանական գոյության կոխի արտահայտության օրակալական տարրերությունը: Շեշտվում է բնական պայմաններին մարդու ակտիվ հարմարվելու, բնության վրա ազդելու, իր կյանքին հարմարեցնելու կարողությունը: Այս օրակալական տարրերությունն արդեն մարդուն այնքան է հեռացրել կենդանուց, որ նույնացնել երկուսի զարգացման օրինաչափությունները չի կարելի: Նույնիսկ եթե բնական բնարությունը կիրառենք դարվինյան մտքով, ինչպես անում են սոցիալ-դարվինիստները, էլեմբի ասելով, դարձյալ հակասությունների,

հակառակ գրույթների ենք դեմ գալիս: Ըստ Գարրիելի՝ գոյության կոլումբերապրում են ամենից լավ հարմարվածները և ոչ թե միայն ուժեղները: Եթե սոցիալ-գարրիելիզմի տեսանկյունով մոտենանք մարդկային հասարակությանը, ապա փաստերը հակառակն են նշում: Էլեմն ասում է. «Պատերազմը կլանում է լավերին, աղջիկը ամուսնանում է յուզոտ, գրամօժիտ, փճացած երիտասարդի վրա»։ դա կապիտալիստական հասարակարգի համար բնորոշ բնատրություններն են: Այնուհետև ավելացնում է. «Ներկայիս տիրող քափիթալիստական կարգերուն ներքև բազմը կխնդա միայն անոնց, որոնք ճարպիկ են, ամեն տեսակ ստոր խաղեր, էնթրիկներ սարքելու մեջ, և անհաջողության կմատնին անոնք, որ ուժեղ նկարագիր մը ունին» (էջ 87):

Այսպես ուրեմն, սոցիալ-գարրիելիստների գրույթը՝ կիրառելի գարրիելիզմը մարդկային հասարակության նկատմամբ, անհիմն է: Հատուկ գլխում՝ «Իրերօգնության ազգակը» վերնագրով, էլեմը կանգ է առնում Գարրիելի կողմից գոյության կոլի գերազնահատության հարցին: Այդ առթիվ էլեմը գրում է. «Ամենամեծ մոլորումն ու թյուրիմացությունը որ բրած են տարրիականներ և կարգ մը բնկերականներ, այդ՝ գոյության կոլի գերի չափազանցությունն է» (էջ 193):

Մարքսը, մանավանդ էնգելսը արդեն նշել էին Գարրիելի թերությունն այդ հարցում: Գարրիելի մի անհաջող արտահայտությունն իսկապես նշում է, որ Գարրիելը փոքր չափով, կարծես, գոյության կոլի տեսնում է նաև մարդկային հասարակության մեջ. ճիշտ է, նա մայթուսականների, սոցիալ-գարրիելիստների նման չգարգացրեց այդ միտքը, բնդհակառակը, նույնիսկ ինքը նշեց, որ գերաճումը չի կարելի համարել կարևոր ազգակ մարդկանց նկատմամբ, քանի որ կան արհեստական միջոցներ աճման առաջն առնելու, կան նաև սնունդն ավելացնելու հնարավորություններ: Գարրիելը չժխտեց նաև փոխադարձ օգնության նշանակությունը բնության մեջ: Էլեմը լավ ուսումնասիրել էր մարքսիզմի կլասիկներին, հավանական է, կարգացել էր էնգելսի «Անտիգյուրինգը», լավ ծանոթ էր և Գարրիելի ուսմունքին, այդ է պատճառը, որ գոյության կոլի գերազնահատության «մոլորումները», գոյության կոլի սրպես միակ ազգակ ճանաչելը նա վերադրում էր ոչ թե Գարրիելին, այլ «տարրիականներին» (նկատի է առնում՝ սոցիալ-գարրիելիստներին — Ռ. Գ.) և կարգ մը բնկերարաններին» (գարձյալ սոցիալ-գարրիելիստական սոցիոլոգներին — Ռ. Գ.):

Այս առթիվ էլեմը գրում է.

«Տարրիականներու և բնկերարաններու այս փաստարանությունը տեղի կունենա կամ գիտնականի հատուկ կուրսություններով և կամ որոշ նկատումներու իբր հետևանք, որովհետև չեն տեսներ ոչ միայն գիրենք շրջապատող իրականության մեջ գոյություն ունեցող գոյամարտեն դատ սերիչ նույնքան և ավելի մեծ դեր խաղացող իրերօգնության, համերաշխության ոգին, այլև անոնք չեն կրնար նշմարել և կամ այգպես կը ձևացնեն նույնիսկ Տարրիելի — իրենց վարպետին — այս վերջին ազգակին բնծայած կարևորությունը՝ մանավանդ մարդկային հասարակության մեջ: Տարրիել որքան որ գոյության կոլի սկզբունքը երևան հանեց կենդանական հասարակության մեջ իբրև բնատրության միջոց, բայց այն շեշտեց նաև համե-

բաշխությունները, և այս երկուքին զուգընթացարար ունեցած ազդեցությունը կենդանական հասարակություններու մեջ» (էջ 194):

Դարվինը բազմաթիվ օրինակներ է բերում փոխադարձ օգնություն վերաբերյալ: Էլեմն էլ այդ հաստատում է, առանձնապես շեշտում դրանշանակությունը, նշելով այդ հարցում նաև Կրապուտկինի «Փոխադարձ օգնությունը սրպես էվոլյուցիայի ազդակ» աշխատությունը, որտեղ բերված են կենդանական աշխարհում նկատվող փոխօգնության բազմաթիվ հետաքրքիր օրինակներ:

Ի վերջո, էլեմը գրեւորում է սոցիալ-դարվինիստների գրույթների դասակարգային էությունը: «Սոցիալ-դարվինիստները, — ասում է էլեմը, «մասնավոր դիտումով» ճշնում են արդարացիներ և սխալները «արդի հասարակական կազմը և անոր ամեն մեկ հաստատությունները» (էջ 197):

Ապա ավելի սրուշակի է արտահայտվում այն մասին, որ չի կարելի դարվինիզմն օգտագործել սոցիալ-դարվինիստական գրույթների համար: Նա գրում է. «Սխալ են այն հեռակությունները, որոնք կհանվեն տարվինիզմեն ընկերավարության դեմ հակադրելու համար» (էջ 197):

Անցյալի և արդի սոցիալ-դարվինիստներն իրենց գրույթները հիմնավորելու համար սխալ են մեկնաբանում դարվինիզմը, օգտագործում են Դարվինի թերի հայտնած, որոշ պայմաններից դրդված, քողարկված մըտքերն այն ուղղությամբ, որպեսզի դարվինիզմը գուրս բերեն իդեալիստական ուսմունք, կրոնի հետ համատեղվող, ապա և կապիտալիստական հասարակակարգի գոյություն կայունությունը հիմնավորող ուսմունք: Էնդելսը և Մարքսը արդեն ժամանակին նշեցին այդ ճիգերի ապարդյուն լինելը, անհիմն փորձերը, բայց միևնույն ժամանակ վեր հանելով դարվինիզմի թերի կոզմերը, շեշտեցին դարվինիզմի սևոլյուցիոն, հակակրոնական, մատերիալիստական էությունը:

Արևմտահայ գրականության մեջ էլեմն այդ տեսանկյունով էլ պաշտպանեց դարվինիզմը հայ սոցիալ-դարվինիստներից, հայ կղերականներից և այն բնագետներից, որոնք ճշնում են դարվինիզմի ու կրոնի միջև հաշտություն կամուրջ գցել, որոնք ճշնում էին դարվինիզմով մեկնաբանել մարդկային հասարակության օրինաչափությունները:

Р. Б. ГАБРИЕЛЯН

## ОТКЛИКИ УЧЕНИЯ ДАРВИНА В ЗАПАДНО-АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

### Р е з ю м е

Среди западно-армянских деятелей, как убежденные сторонники учения Дарвина, выделялись Малакян и Элем. Оба выступали в защиту материалистических идей дарвинизма, подвергнув критике идеалистов-комментаторов учения Дарвина.

Малакян в книге „Бог перед наукой“ (1911) подробно комментирует основные идеи дарвинизма, выявляя их материалистическую сущность, и обосновывает несовместимость науки и учения Дарвина с

религией. Касаясь проблем вида, предшественников Дарвина, основных законов дарвинизма, он приводит доказательства (сравнительно-анатомические, эмбриологические, палеонтологические) эволюции организмов, а также животного происхождения человека. В вопросе о происхождении жизни, в отличие от большинства западно-армянских деятелей (в том числе и известного натуралиста Тагаваряна) Малакян придерживается материалистических позиций.

Элем—первый среди западно-армянских деятелей учение Дарвина оценивает с точки зрения марксизма. Высказывания Элема выявляют его знакомство с трудами классиков марксизма, ряда натуралистов (Дарвина, Геккеля, Гексли и др.), социологов (Лориа, Ферри и др.).

В пространном очерке „Дарвинизм как общественное явление“ („Еркунк“, Константинополь, 1912, № 1—8) Элем высоко оценивает значение труда Дарвина, подвергает критике буржуазных комментаторов дарвинизма—социал-дарвинистов и мальтузианцев. Выявляет классовый характер положений социал-дарвинистов, сводящих социальные закономерности к биологическим, он резко критикует мальтузианцев, доказывая необоснованность сведения классовой борьбы к биологической борьбе за существование.